

**ՔԱՂԱՔԱՊԵՏՆԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ՝
ԱՐԵՎԵԼՔ**

**«Աջակցել Քաղաքապետների
դաշնագրում Արևելյան
գործընկերության և
Կենտրոնական Ասիայի
քաղաքների մասնակցությանը»**

Քաղաքապետների դաշնագիրը Եվրամիության կողմից մեկնարկած նախաձեռնություն է, որը կոչված է համընդհանուր կամավորական պատասխանատվությամբ միավորելու տեղական ինքնակառավարման մարմիններին և տարածաշրջանային իշխանություններին՝ հոգուտ կանաչ տնտեսական աճի և կյանքի որակի բարելավման:

Դաշնագիրը ստորագրողները կամավոր կերպով համաձայնվում են էներգա-արդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտներում իրականացնել համապատասխան գործողություններ, որոնք թույլ կտան մինչև 2020թ. նվազագույնը 20%-ով կրճատելու ածխաթթու գազի (CO₂) արտանետումները:

Հիմնական փաստեր

<p>Ընդհանուր նպատակները՝</p>	<p>Ծրագրի նպատակն է. աջակցել Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի տեղական իշխանություններին՝ նվազեցնելու իրենց կախվածությունը հանածո վառելիքից, բարելավելու էներգիայի մատակարարման իրենց անվտանգությունը և թույլ տալու նրանց ավելի ակտիվորեն նպաստել կլիմայի փոփոխության մեղմմանը:</p>
<p>Առաձևահատուկ նպատակները՝</p>	<p>Ծրագրի նպատակն է. խրախուսել տեղական իշխանություններին ստորագրելու «Քաղաքապետների դաշնագիրը» և աջակցելու իրենց «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» (SEAP) մշակման ու իրականացման գործում: Հիմնական նպատակն է. բարելավել մարդկանց կյանքի որակն ածխաթթու գազի (CO₂) արտանետումների զգալի նվազեցման շնորհիվ՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերականգնվող էներգետիկ ռեսուրսների ավելի լայն կիրառմանը և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման միջոցով:</p>
<p>Շահառու երկրները՝ Հիմնական թիրախային խմբերը՝</p>	<p>Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա և Ուզբեկստան</p> <ul style="list-style-type: none"> • Տեղական ինքնակառավարման մարմիններ (ինչպես Դաշնագրին արդեն միացած, այնպես էլ հավանական ստորագրողներ) • Պետական / տարածաշրջանային իշխանություններ (որպես Դաշնագրի հավանական համակարգողներ) • Տեղական ինքնակառավարման մարմինների միավորումներ (որպես Դաշնագրի գործող կամ հավանական աջակիցներ) • Դոնորներ և ֆինանսական կազմակերպություններ • Այլ շահագրգիռ կողմեր (ՀԿ-ներ, էներգետիկ գործակալություններ, մասնավոր սեկտոր, կրթական հաստատություններ և այլն) • Քաղաքացիներ:



Ծրագիրը ֆինանսավորող կազմակերպությունը՝	Եվրահանձնաժողով, Չարգացման և համագործակցության գլխավոր տնօրինություն – EuropeAid:
Ծրագիրն իրականացնողը և կոնսորցիումի ղեկավարը՝	Իրենց կայուն էներգետիկ ապագան կերտող տեղական իշխանությունների եվրոպական ասոցիացիա «Energy Cities» www.energy-cities.eu
Կոնսորցիումի անդամները՝	Տեղական իշխանությունների եվրոպական ասոցիացիա «Climate Alliance» www.climatealliance.org «Ուկրաինայի էներգաարդյունավետ քաղաքներ» միություն www.enefcities.org.ua/en Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն (CAREC) www.carecnet.org
Տևողությունը՝	2011թ. սեպտեմբերից մինչև 2015թ. հունիս

«Քաղաքապետների դաշնագիր՝ Արևելք» ծրագրի հակիրճ նկարագրությունը

Ծրագրի գործողությունները նպատակ են հետապնդում իրականացնելու չորս հիմնական առաքելություն.

- 1. Զարգացում** – շահառու բոլոր երկրներում «Քաղաքապետների դաշնագիրը» դարձնել հայտնի նախաձեռնություն՝ զգալի թվով ստորագրողների և Դաշնագրի համակարգողների ու աջակիցների ներգրավմամբ:
- 2. Ուսուցում և կարողությունների զարգացում** – ուսուցման գործնական դասընթացներ, որոնք տեղական իշխանություններին աջակցում են իրականացնելու Դաշնագրի շրջանակներում իրենց կողմից ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև Դաշնագրի աջակիցներին և համակարգողներին թույլ են տալիս բարձրորակ ծառայություններ մատուցել իրենց թիրախային խմբերին:
- 3. Աջակցության ծառայություն** – տեղեկատվություն տրամադրել բոլոր այն կողմերին, որոնք շահագրգռված են միանալ կամ աջակցել Դաշնագրին (քաղաքներ, տարածաշրջանային իշխանություններ, միավորումներ, և այլն), ամենօրյա աջակցություն տրամադրել ստորագրող կողմերին «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերի» (SEAP) մշակման և իրականացման գործում, ինչպես նաև աջակցել տարածքային համակարգողների հետ արդյունավետ համագործակցության սխեմաների ստեղծմանը:
- 4. Համագործակցություն դոնորների հետ** – ստեղծել ողջ սեկտորն ընդգրկող աջակիցների (դոնորների) կոալիցիա ստորագրող կողմերի (քաղաքների) պարտավորությունների կատարման, մասնավորապես, «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերի» իրականացման, ֆինանսավորմանը նպաստելու նպատակով: Կազմակերպել շահառուների, տեղական և տարածաշրջանային հաստատությունների, դրամաշնորհ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև ԵՄ համապատասխան պատվիրակությունների ու այլ շահագրգիռ կողմերի ներգրավմանը և համագործակցությանն ուղղված գործողություններ: Տրամադրել օգնություն եկամտաբեր և տնտեսապես գրավիչ ծրագրերի սահմանման հարցում:



«Քաղաքապետների դաշնագիր՝ Արևելք» ծրագիրը և ծրագրի չորս հիմնական փորձագետները, որոնք գտնվում են Կիևում (Ուկրաինա), Թբիլիսիում (Վրաստան), Երևանում (Հայաստան) և Ալմաթիում (Ղազախստան), սերտ համագործակցում են Քաղաքապետների դաշնագրի Բրյուսելի գրասենյակի և Միավորված հետազոտական խմբի (Joint Research Center) հետ՝ Եվրահանձնաժողով, Զարգացման և համագործակցության գլխավոր տնօրինության վերահսկողության ներքո:

Ակնկալվող արդյունքները՝

Ծրագրի ավարտին մենք ակնկալում ենք հետևյալ արդյունքները.

- Քաղաքապետների դաշնագիրը ողջ տարածաշրջանում հայտնի և հասարակության տեսադաշտում գտնվող նախաձեռնություն է, որին միացել են նշանակալից թվով կողմեր: Այս գործընթացի արդյունքներից է նաև կլիմայի փոփոխության և կայուն էներգետիկ զարգացման լուծումների վերաբերյալ հանրության բարձր իրազեկվածությունը:
- Ստորագրող կողմերը իրազեկված են իրենց պարտավորությունների մասին և ի գործ են իրականացնել դրանք, մասնավորապես, ստեղծել անհրաժեշտ կարողություններ և իրագործել կայուն էներգետիկ զարգացման ռազմավարություններ, ինչպես նախատեսված է «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերում» և արտանետումների գույքագրումներում:
- Տեղական ինքնակառավարման մարմինների կատարելագործված կարողությունները և «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերը» նպաստում են այնպիսի ֆինանսական աղբյուրների մատչելիությանը, ինչպիսիք են տեղական ֆինանսական գործիքները, միջազգային ֆինանսական հաստատությունները և միջազգային ֆինանսավորման այլ մեխանիզմները, ինչպես օրինակ՝ Հարևանության ներդրումային գործիքը (Neighbourhood Investment Facility - NIF) և Կենտրոնական Ասիայի ներդրումային հիմնարկությունը (Central Asia Investment Facility - IFCA):
- Համախմբելով դոնորներին և խթանելով ներդրումները, քաղաքների «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերում» ներառված գործողությունները դառնում են տնտեսապես ավելի գրավիչ և գտնում են բավարար ֆինանսական աջակցություն:
- Հավաքագրվում և հրապարակվում են վիճակագրական տվյալներ Դաշնագրին միացած քաղաքների կողմից իրականացվող գործողությունների վերաբերյալ (Դաշնագիրը ստորագրած քաղաքների քաղաքացիների թիվը, ածխաթթու գազի (CO₂) արտանետումների կրճատման ծավալը, էներգիայի սպառումը և արտադրությունը, «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերում» ընդգրկված հիմնական ցուցանիշները և տեղեկությունները և այլն):
- Քաղաքապետների դաշնագրին աջակցող դերակատարներն ու հաստատությունները միջոցառումների իրականացման կարևոր գործընկերներ են:
- Քաղաքացիների սոցիալական և տնտեսական բարեկեցության բարելավման միտում (կապված կյանքի որակի՝ աշխատատեղերի ստեղծման, բիզնեսի զարգացման և նորարարության, հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների բարելավման, ավելի առողջ միջավայրի ձևավորման, մաքուր էներգիայի մատչելիության և այլ գործոնների հետ):
- Էներգետիկ ծառայությունների մատչելիության և հասանելիության բարելավման միտում (վառելիքի անբավարարության կրճատում):